ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«25» հունվարի 2017 թվականի № 1**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի №1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի 2017 թվականի հունվարի 25-ի № 1 հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի № 30-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

2. 2017 թվականի համար «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը և հաստիքացուցակը հաստատելու մասին

Կողմ(5) Դեմ(0) Ձեռնպահ(0)

| | |
|---|---|
| ԱՐԱՐԱՏ | ԱԼԵՔՍԱՆՅԱՆ |
| ՍԵՐԳԵՅ | ԳԵՎՈՐԳՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ | ԵՍԱՅԱՆ |
| ՌԱՆՏԻԿ | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |
| ԷԴԻԿ | ՆԱՂԴԱԼՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս`098777709,
էլ. փոստ`khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«25» հունվարի 2017 թվականի № 2-Ն**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի № 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ պարբերության, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ , 3-րդ և 5-րդ մասերի պահանջներով` ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին» № 30-Ն որոշման մեջ համայնքի ղեկավարի կողմից առաջարկված փոփոխությունները.

1) 3-րդ կետով հաստատված հավելվածի հատված 2-ի `

ա. 4-րդ կետի «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.6.1 ծրագրի «1210.0» թիվը փոխարինել «1460.0 » թվով,

բ. 14-րդ կետի «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի «2 154.5» թիվը փոխարինել «1 904.5 » թվով,

2) 4-րդ կետով հաստատված հավելվածի հատված 3-ի `

ա. «մասնագիտական ծառայություններ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածի « 300.0 » թիվը փոխարինել « 550.0 » թվով,

բ. «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածի «2 154.5 » թիվը փոխարինել « 1 904.5 » թվով,

3) 5-րդ կետով հաստատված հավելվածի հատված 6-ի `

ա. «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.6.1 ծրագրի «մասնագիտական ծառայություններ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածի «150.0» թիվը փոխարինել «400.0» թվով: «Ընդամենը » տողի «1210.0» թիվը փոխարինել «1460» թվով:

բ. «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածի «2 154.5» թիվը փոխարինել «1 904.5» թվով: «Ընդամենը» տողի « 2 154.5» թիվը փոխարինել «1 904.5» թվով:

1) Որոշման 6-րդ կետի «0» թիվը փոխարինել «12 741.02 հազար դրամ» բառերով:
2) Որոշման 7-րդ կետի «1» ենթակետի «0» թիվը փոխարինել «7 702. 307 հազար դրամ» բառերով:

3) Որոշման 7-րդ կետի «2» ենթակետի «0» թիվը փոխարինել « 5 038.713 հազար դրամ» բառերով:

2. Որոշման 7-րդ կետը լրացնել«5», «6», «7»,«8» ենթակետերով՝

«5) Հաստատել համայնքի 2017 թվականի ֆոնդային բյուջեի հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման հոդվածների հետևյալ չափերով.

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 01.1.1 | օրենսդիր և գործադիր մարմին,պետական կառավարում | 10 941.02 |
| 01.6.1 | ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 1 800.0 |
| **Ընդամենը** | | **12 741.02** |

6)Հաստատել համայնքի 2017 թվականի ֆոնդային բյուջեի հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակներն ըստ բյուջետային դասակարգման տնտեսագիտական հոդվածների հետևյալ չափերով.

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 5112 | Շենքերի և շինությունների կառուցում | 10 691.02 |
| 5133 | Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր | 1 800.0 |
| 5134 | Նախագծահետազոտական ծախսեր | 250.0 |
| **Ընդամենը** | | **12 741.02** |

7)Հաստատել համայնքի 2017 թվականի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին իրականացվող կապիտալ աշխատանքների ցանկը.

| | | |
|---|---|---|
| 5112 | Շենքերի և շինությունների կառուցում | 10 691.02 հազար դրամ |
| 5133 | Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր | 1 800.0 հազար դրամ |
| 5134 | Նախագծահետազոտական ծախսեր | 250.0 հազար դրամ |

8) Սահմանել, որ սույն որոշման անբաժանելի մասն են կազմում համայնքի 2017 թվականի բյուջեով նախատեսված եկամուտների և ծախսերի հիմնավորումները, հաշվարկները, այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունները:

Կողմ(5) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌՈՒՍՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2017 թվականի № 3-Ն

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ «ԽԱՉՓԱՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ պարբերության պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը և հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (5)    դեմ (0)    ձեռնպահ (0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Դ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված

Խաչփար համայնքի ավագանու

2017 թվականի հունվարի 25-ի № 3-Ն որոշման

«ԽԱՉՓԱՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ

1.Աշխատակիցների քանակը` 5

2.Աշխատակիցների հաստիքացուցակը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ |
|---|---|
| Տնօրեն | 1 |
| Ընտանեկան բուժքույր | 1 |
| Ընտանեկան բուժքույր | 1 |
| Ընտանեկան բուժքույր | 0.5 |
| Հաշվապահ | 1 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ